ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/1485 «22» 11 2022թ.

Ձեր

«Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊԸ-ի
տնօրեն Ռ. Դանիելյանթենին
Հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 19
Էլ. Փոստ՝ office@informaticssolution.com
Հեռ. +37460830088

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ոստիկանության և «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊ ընկերության միջև 27.06.2022թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ-2022-1 ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ շրջանակներում մատակարարը պարտավորվել էր մատակարարել 60000 հատ «Իդեմիա» ապրանքային նշանի վարորդական վկայականի պլաստիկ քարտ, սակայն «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊ ընկերության կողմից մատակարարված ապրանքները չեն համապատասխանել տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և ՀՀ ոստիկանության պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվել է «Բացասական եզրակացություն» պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ, մասնավորապես՝ մատակարարված ապրանքը «ԻԴԵՄԻԱ» ապրանքային նշանի չի եղել, որից հետո ՀՀ ոստիկանությունը 24.10.2022 թվականին առաջարկել է 15 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել Պայմանագրի հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք, ինչը «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊ ընկերության կողմից չի կատարվել:

Ուստի, մատակարարի կողմից խախտվել է Պայմանագրի 1.1 կետի պահանջները, մասնավորապես՝ չի մատակարարվել Պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն /ՀՀ ոստիկանությունը/ իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը /«Ինտելիջենթ

Սոլուշնս» ՍՊ ընկերությունը/ էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ոստիկանության և «Ինտելիջենթ Սոլուշնս» ՍՊ ընկերության միջև 27.06.2022թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆ-2022-1 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի /ՀՀ ոստիկանության/ կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված բանկային երաշխիքները՝ որակավորման ապահովում՝ տրված «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲ ընկերության կողմից, 22 320 000 /քսաներկու միլիոն երեք հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում՝ տրված «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲ ընկերության կողմից, 7 440 000 /յոթ միլիոն չորս հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ, կներկայացվի «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲ ընկերություն սահմանված կարգով և ժամկետներում Բենեֆիցիարին /ՀՀ ոստիկանությանը/ վճարումները կատարելու համար:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ սույն ծանուցումը հրապարակվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժեր՝ 465 000 /չորս հարյուր վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ և տուգանքը՝ 372 000 /երեք հարյուր յոթանասուներկու հազար/ ՀՀ դրամ, որի ընդհանուր գումարը կազմում է 837 000/ ութ հարյուր երեսունյոթ հազար/ ՀՀ դրամ: Հակառակ դեպքում գումարները կգանձվեն դատական կարգով: Եթե մինչև 2022թ. նոյեմբերի 28-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գանձման ենթակա գումարները, ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրանական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժին /ք. Երևան,Նալբանդյան 130/:

Հարգանքով՝

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Վ.ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Գնումների համակարգման բաժին
Հեռ. 010596857